

Տարեկան գինը 10 րուբլ կէս տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

()տարագրագրացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Ммаск“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Այստեղ ինչ պէտք է անենք,—հարցին տե-
սութիւն: Նամակ Զաւար-Օղուց: Նամակ Ախալ-
քալաքից: Ներքին լուրեր: Արտաքին տեսու-
թիւն: «Մասկա» թղթակցութիւնը: — Խառն
լուրեր: «Մշակ» հեռագիրներ: — Հայտարարու-
թիւններ: — Տեղեկացոյց: — Բան ասիրական ժա-
մանակիս կրթված որդին:

ԱՅՍԵՂ ԻՆՉ ԴԵՏԲ Ե ԱՆԵՆԲ

«Մշակ» նախընթաց համար-
ներում խօսելով Կ. Պոլսի հայոց
ընկերութիւնների մասին, մենք
այն եղբակացութեանը հասանք,
որ Հայաստանի համար բոլոր
գործող ընկերութիւնները ան-
պատճառ պէտք է միանան մի ըն-
կերութեան մէջ:

Բայց մինչև որ Կ. Պոլսի ըն-
կերութիւնները կը խորհրդակցեն
իրանց միութեան գործի մասին
և վերջապէս կիրադորեն իրանց
միութիւնը, մենք, ուստի հայերս,
որոնք համակրում ենք և միշտ
պատրաստ ենք նիւթապէս և բա-
րոյապէս օգնել թիւրքիայի մեր
եղբայրակիցներին, մենք ի՞նչ պէտք
է անենք... Պէտք է այդ ժամա-

նակ անգործ մնանք, թէ նրանց
միութեան գործի աջակցութիւնը
տեսնելով, պէտք է նոյնպէս պատ-
րաստվենք կազմակերպելու մեր
ոյժերը մեր թիւրքիայի եղբայր-
ներին աւելի լաւ օգնելու համար:

Այստեղ թեմա՞նք կարող ենք
ասել, որ մեր յայտնած մտքերին
համակրում են մեր հասարակու-
թեան բոլոր դասակարգերի ան-
ձինք, բայց միթէ այդ համակրու-
թիւնը կը լինի լոկ պլատօնա-
կան և չի դառնայ իրական:

Հատ լաւ է, որ «Մշակ» պէս
մի լրագիր մէնակ կարողացաւ մի
տարվայ մէջ 12,000 րուբլ հաւա-
քել յօգուտ «Լրարատեան» ընկե-
րութեան, մենք պատրաստ ենք և
ապագայի մէջ էլ կայանայ թէ
չը կայանայ մեր ցանկացած միու-
թիւնը, շարունակել նուիրել մեր
ոյժերը Կ. Պոլսի ընկերութիւննե-
րի գործին,—բայց արդեօք կարող
ենք մենք իւրաքանչիւր տարի մէ-
նակ նոյն աջակցութեամբ գործը
առաջ տանել...

Ճշմարիտ է, մենք գրեցինք մի
քանի յօդուածներ, յորդորեցինք
հայ հասարակութիւնը նուէրներ

անելու, հասարակութիւնը համա-
կրելով գործին և մեզ հաւատ ըն-
ծայելով, սկսեց կամաւոր նուէրներ
ուղարկել մեր խմբագրութեան ա-
նունով: Եւ քան կարող է անել
մի լրագրի խմբագրութիւն: Մենք
բաւականացանք կամաւոր նուէր-
ներով: Բայց մենք չը կարողա-
ցանք կազմել ոչ պարահանդէսներ,
ոչ թատրոնական ներկայացում-
ներ, ոչ կոնցերտներ ու խնջոյք-
ներ յօգուտ «Լրարատեան» ընկե-
րութեան: Եւ քան պատճառը, որ
մեր ստացած նուէրների մեծ մա-
սը թիֆլիսից դուրս էին հաւաք-
վում, իսկ նոյն իսկ թիֆլիսը հա-
մեմատաբար դեռ գրեթէ ոչինչ
չէ տուել յօգուտ «Լրարատեան»
ընկերութեան: Մենք տարակոյս
չունենք, որ եթէ լաւ աշխատէր,
թիֆլիսից դեռ կարելի էր մեծ
գումարներ ստանալ նոյն նպատա-
կով, հաւատացած ենք որ վերջը
և թիֆլիսն էլ արձագանք կը տայ
այն մարդասիրական շարժմանը,
որ վերջին տարին այդքան նշմա-
րելի է եղել գաւառներում և Ռու-
սաստանի եւրօպական մասի հա-
յաքանակ բաղադրներում: Բայց դո-

րա համար աշխատողներ հարկա-
ւոր են, դորա համար հարկաւոր
է սպասել մեր խմբագրութեանց
դուրս մասնաւոր անձինքների կող-
մից համարձակ ինիցիատիվներ:
Մենք միայն տպագրական խօս-
քով յորդորում էինք, և յետոյ
հանգիստ կերպով սպասում էինք
որ մեզ տան: Տուածը ընդունում
էինք և ուղարկում էինք որտեղ
հարկաւոր էր: Մենք ոչ մի հան-
դէս, ներկայացում, խնջոյք չը
կազմեցինք, ոչ որքան ստորագրու-
թեան թերթ չառաջարկեցինք և
երբէք այդ չենք կարող անել
Դա մի խմբագրութեան գործ չէ,
դա մասնաւոր ինիցիատիվ գործն
է:

Եւ մենք հաւատացած ենք որ
այս ճանապարհով մասնաւոր ան-
ձինք կարող են, եթէ ուզենան,
մի տարվայ մէջ մեզանից երկու
անգամ աւելի հաւաքել մասնաւոր
որ, ինչպէս ասացինք, թիֆլիսը
որ ուրիշ նպատակների համար
բաւական է տուել դեռ գրեթէ
ոչինչ չէ տուել այդ նպատակով:

Բայց արդեօք կարող է և մաս-
նաւոր անձանց ձեռքում այդ տե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻՍ ԿԻՐՎԱՆԻ ՈՐՈՒՆ

(Պատկեր)

IV.

Սկսվել են հարցաքննութիւնները:
Գարոցի խեղդիչ և վարակիչ կեանքին աջքան է
ընտելացել նա, փափուկ ապրելու դաղտնիքներով
անքնն է հրապուրվել նա, որ երբ ենթադրում է
թէ հեռանալու է, տրտմութիւնից աչք չէ բաց
անում...

(Լաւ է որ նա այդքան սիրահարվել է դպրո-
ցով, թէ ոչ նրա սպանարար ներգործութիւնները
զգալով դուրս է հենց դպրոցի մէջ սկսել դպրոցը
կործանել. բայց ով է զարգացրել նրա մէջ այդ
ամենը զգացող հոգի: Գարոցից դուրս նա իրա-
ւանք չունի ոչ դիմ հետ յարաբերութիւն ունե-
նալ...)

Քննութիւնները շարունակվում են:
Կարմիր մահուկով ծածկված սեղանի առջև նա
թափում է իր գիտութիւնը:

Նա դուրս է տալիս ամուսնու բառեր և հարցերին
պարծեմ պատասխանում...

Նա ստանում է ատեստատ, մի թղթի կտոր,
նախկին սպան, վարքը դեբաղանց և բոլորից՝ յոյժ
զեղեցիկ...

Առաւ նա, ծալեց այդ թղթակտորը, որով իրան
հասած է համարում գիտութեան վերջնապայման:
«Ազատութիւն... հաւատարմութիւն... լուսաւո-
րութիւն...» գրուած է նա անմտօրէն:

Ոտքը դուրս դրեց աճա մեր փիլիսոփան. բայց
ինչ...

Գարոցի չեմքի միւս կողմը—աշխարհ—թակարդ
է թիւում նրան...

Նա այս քանի օր է թափառում է փողոցնե-
րում. վերջը...

Մեր փողոցապիւր յուսատված դիմում է իր
բարեկամներին:

«Ինչ պաշտօնի իրաւունք ունեմ, որ արժանաց-
նեմ քեզ, որդեակ սիրելի:» պատասխանում է նրա
մի, միւս, երրորդ, չորրորդ ուսուցիչը, որոնք ա-
մենքն էլ պաշտօնի համար հոգի են տալիս և ճա-
րած պաշտօնի վրա ձիւթվում, կպչում, մօտ եկողին
էլ մորտում, խուկում...

Գալիք ձմեռը նրան յուսահատեցրեց:
Եւ նա օր առաջ իր հօր մօտ վաղեց...

V.

«Այդք լիս, տղէ՛ք յուսումնական ա դառել, եկել:»
ողջունում են խեղճ հօր բարեկամները:

Որդին սկսում է փառաւորապէս հօր դրպանին
նստել:

Նրա միւս եղբայրները իրան դերին են:
Ցան փառիկ հաւերը, եղն ու ձուռն նրա փորումն
է հասնում:

Նա պատ է ուտում (այդ նրա գիտութեան առ-
տիճանացոյցն է) և հրապարակապէս խօսի ու
եկեղեցու վրա խօսում.—այդ նրա ուսումնական
յառկանիւն է...

«Այ՛, մեզ, վայ մեր օրին...» օ, յուսումնական որ
դառնում են, հենց էն ա ըլել, որ խաչը, ժամը,
պար, աղօթքը ուրանան...» զարմանում են խեղճ
գիւղացիները:

Բայց այդ ոչինչ:

Հայրը սպասում է թէ իր յուսումնական
որդին արդէն սկսելու է մեծ գործերի ձեռնամուխ
լինել, ջրեր կանգնացնել...

Մեր իմաստալը ոչ մի դէպքում չէ յարմար-
վում իր հօր և օրական մի քանի անգամ յուզ-
մանքներով չիթում գիւղական խաղաղ օջախի
շուրջը...

Նա սովորել է դադած փողի, ուրիշի հաշվով
ապրելու:

Նա ամաչում է իր հօր պարապմունքին մաս-
նակցել և ատում է այն ամենը, որ գործ ունի
հողի հետ:

«Թափիկ էք, տղէ՛ք էք... գոռում է մեր ի-
գիտը:

Կանքի մէջ նա աւելի թշուառ, աւելի տղէտ
է քան իր հայրը:

«Հայրիկ, փող տուր, դնամ...» որովհետեւ ինձ ա-
մօթ է գիւղում նստել...

Խեղճ հայրը նոր է տեսնում իր որդու ինչ լի-
նելը:

Բայց ինչ ունի խեղճը, որ ինչ տայ:
Որդին չէ հաւատում:

«Ի՞նչ անկիրթ էք, դուք անգութ էք: Ի՞նչ
հայր, ի՞նչ որդի. այդ բառերը սուտ են» ասում է
նա և...

—«Այ՛, վայ, վայ. մօ երեխէն աչքաբացվեց
թէ չէ խղիւրդ պէտք ա դրկես, խողբը...»

—«Յօ, յուսումն օրն ա. էդ չի յուսումնականը,
ինչ յուսումնական, հաղիւր սանական ասենք, աւելի
լաւ չի...»

—«Թի՛ս...» թրտում են ամենքը:

Եւ կեանքի ստորելը ամենուստեք արժանա-
ւով իր արժանի դատապարտութեանը, յուսահատ-
ված, իրան յանձնում է կեանքի փորձանքներին
հաց ճարելու մարդով. «Ափսոս իմ աշխատանքին,
հա...» օղորում է հայրը:

VI.

Հօր որդին այժմ փորձով դարձել է ամենաբըն-
նաւորներից, ճարտիկ գողերից մինը, բախտախն-
դիւններից մինը...

Նա նոր է իմանում որ դպրոցն իրան ինչով է
վարձատրել, հետևաբար մեր կրթված տղէտը ա-
տանները դըժբերեցնելով և բերանը հայհոյանքով
լիք է խօսում հայի մասին, հայի հայրենիքի մա-
սին, բայց և ինչ է սիրում նա: Նրա համար հայ-
րենիք չը կայ.—նա կոսովալիտ է իր թէ...

Մեր հացկատակը պատրաստ է ամեն սրբութիւն
ծախել փողի անունին:

«Նշուկի յուսումն էլ, յուսումնական էլ...» ա-
սում են շատերը, լսելով թէ նա իր հաւատն ու-
րացել, հարուստ ալալընով վրա է պսակվել...

Եւ այդպիսի գործերով նա իր նմաններին, մի
բարիք տալու փոխանակ, առաջնորդում է դէպի
բարոյական անկում...

Եւ քանի ապականութիւններ նրա ձեռքով ներս
է մտնում կեանքի մէջ...

Նա միայն չէ, նրապէսները բաղմաթիւ են.
դեռ գրիչը չէ կարողացել մի անունով մկրտել
դրանց. ժողովրդի մասն է միայն դրանց դատա-
պարտիչը, որոնցից, որպէս ահաւոր արտիք փախ-
չում է մասնաւոր անկում—«Տի՛նք գալիս ա...» Տի-
նէք, տեսէք...

—Ո՞վ է, հարց է անում միւսը:

«Պարմասիօնը...» ուրացողը... Յեցողը...

Բանից անտեղեկակ ամբողջ, իրաւունք ունի,
թող ինչ անունով կամենայ մկրտի դրանց:

Բայց ես կասեմ:

«Ինչ որ են ժամանակիս դպրոցները, նոյն է վի-
նելու և ժամանակիս կրթված որդին...»

Գ. Պապեան

սակ գործ տեղական համարվել կարող է նա տարուց տարի գոյութիւն ունենալ կամ մի անգամ մի տարի աշտուղից յետոյ, պէտք է համարվի միմիայն ժամանակաւոր մի գործ...

Մենք կարծում ենք, որ ինչքան էլ աշտուղիւն ունենայ մասնաւոր ինքնիշխանութիւն, նա, այնուամենայնիւ, ժամանակաւոր մի գործ կը լինի:

Բայց որպէս զի գործը լինի ոչ ժամանակաւոր, այլ հաստատու տեղական, պէտք է կազմել մի հաստատու մասնաժողով, կամ մի ընկերութիւն, Բազուի «Մարդասիրական» ընկերութեան պէս, բայց աւելի լայն, ընդարձակ պրօգրամայով որ իրան նպատակ կը դնի, հաստատու հիմնական դրամագրու կազմելուց յետոյ, մի կողմից այդ հիմնական դրամագրութիւններով հայերի լուսաւորութեան գործին օգնելու, իսկ միւս կողմից նոյն նպատակին ձգտելու անդադար աճեցնելով իր շրջական դրամագրութիւնը իր ջանքերով կազմելով զանազան պարահանդէսներ, ներկայացումներ, կօնցերսներ, աւելորդի, ինչոյքներ, դասախօսութիւններ, գրական երեկոյների և ստորագրութիւնների միջոցով:

Եթէ Բարձրագոյն հաստատուած Բազուի «Մարդասիրական» ընկերութիւնը իրաւունք ունի այդ բոլոր միջոցներով գործել յօգուտ հայոց ազգաբնակչութեան (առանց դաւանութիւնների խտրութեան) ուսաց պետութեան սահմաններում—ի՞նչի ուրեմն չաշխատենք նոյնանման մի ընկերութիւն թիֆլիսում կազմել, բայց աւելի ընդարձակ պրօգրամայով, այսինքն որ կարողանայ հայ ժողովրդի լուսաւորութեան մասին հոգալ թէ ուսաց պետութեան սահմաններում և թէ պետութենից դուրս:

Բացի դրամական օգնութենից, այդ տեսակ ընկերութիւն կարող էր և բարոյապէս օգնել Կ. Պօլսի ընկերութիւններին:

Նորերում «Իպրոցասիրաց-Արեւելեան» ընկերութեան պատւելի ներկայացուցիչ, պ. Հահնազար, զիմել է մեզ խնդրելով որ հարկաւոր ժամանակ մատնացոյց անենք այն անձինքները, որոնք համաձայնվելին ընկերութեան ձեռքով Հայաստանում նոր հիմնած դպրոցների մէջ ուսուցիչների պաշտօններ վարելու: Գուցէ այդ մեզ կաշնդրել, բայց գուցէ և ոչ:

Այդ տեսակ բանն էլ ինչպէս և փողերի շարունակ հաւաքելը, իսկապէս մի խմբագրութեան գործ է. ուսուցիչներ առաջարկելը նոյն-

պէս մի ընկերութեան գործ պէտք է լինէր:

Արեւմտապէս եթէ մենք համարում ենք այն մտքին, որ Կ. Պօլսի բոլոր ընկերութիւնները միանալով, այսօր թէ փոքր կը կազմեն մի մեծ, ընդհանուր, հրահայական հայոց ընկերութիւն, որ պէտք է լուսաւորութիւն սփռէ Հայաստանում—գործն համահասարակ պէտք է համակրենք և այն մտքին որ կազմել մի ընկերութիւն թիֆլիսում, որ Կ. Պօլսի ընկերութեան օգնական, նրա աջակից կը լինի, որ կօգնէ նրան թէ նիւթապէս և թէ բարոյապէս:

Եւ մեր կարծիքով այդ տեսակ ընկերութիւն կազմելու համար արդէն հիմնական դրամագրութիւն կայ թիֆլիսում. դա է պատեւրազմի ժամանակ հայ գաղթականների համար կազմված ընկերութեան գումարի մնացորդը, որ դեռ ևս մի բաւական մեծ գումար է կազմում:

Միթէ մենք հանդիստ և անտարբեր կերպով կը սպասենք որ Կ. Պօլսի ընկերութիւնները միանան, իսկ ինքներս ոչինչ չենք անի, որ պատրաստվենք այն ընկերութեան օգնելու:

Եթէ դուք ամենքդ համակրում էք այն մտքին որ Կ. Պօլսում կազմել մի ազգային հսկայական հայոց ընկերութիւն, — պէտք է համակրէք և այն մտքին, որ թիֆլիսում այդ ընկերութեան հետ մշտական յարակցութեան գործի մէջ ծանրութեան կշիռը մեր մասնաւոր շրջաններից անցնի մի հաստատու, տեղական, պաշտօնական հայոց ընկերութեան ձեռքը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԶԱՂԱԼ-ՕՂԱՆԻՅ

10 սեպտեմբերի

«Մշակ» 115 համարում խոստացել էի մի անգամ ևս վերագրաւոր Ջալալ-Օղլի և մի քանի խօսք ասել նրա մասին: Այն այսօր, թէ և մի քիչ ուշ, կատարում եմ խոստումս մեծապէս լինելով մի և նոյն ժամանակ որ Ջալալ-Օղլեյի բարեկամական աչքով կը նայեն ինձ վրա, երբոր ես այսօր հրապարակաւ խօսում եմ նրանց մի քանի պակասութիւնների մասին, ի հարկէ այն նպատակով որ նրանք աշխատեն հեռանալ իրանց սահմանից այդ պակասութիւնների: Օրինակ վաճառականութիւնը Ջալալ-Օղլեյոց համար դուռն է մօղայի պէս մի բան: Ա՛յ 10 բ. ունի իսկոյն մի դուռն է բացահայտում, վաճառականութեան յարմար արժանիք բարակ քամար չէլքէլկու վրա կապած կանգնում է դռնի առաջ, ընդհանր բաց ու խուռ է անում աւրջկոտում ու ճարահատակ դալիւ վրա քնում և խնդը երազում էլ մոռւտ արի չէ տեսնում: Որտեղից կը լինի մուշտարի, քանի որ մէկ կողմը թիֆլիս է, միւս կողմը Ալեքսանդրապոլ, կողքին Մեծ. Ղարաբաղէն, դեռ մասնաւոր գիւղերի մէջ

գտնված խանութները չեն հալվում: Մտնենք այդ խանութներից միւր, անհ. քեզ մի քանի վարուժ, մի երկու դուռն լուցիլի, մի երեք չորս ասեղ (կան մի երկու լաւ խանութներ), մի քանի արջի կտաւ-ւեղէններ և այլ այսպիսի խառն ի խուռն իրեղէններ: Բայց վաճառականի թանկագին մատանին, ոսկեայ ժամացոյցը, արծաթեայ գոտին, ազնիւ հագուստը տան անգամ թանգ արծեն քան թէ դուռնի բոլոր ապրանքը: Ինչ կուզէ լինի միայն ջալալ-Օղլեյոյն վաճառականն արտադրող պատկեն, այդ է նրա միակ փառքն ու պարծանքը: Աշխատանքն էլ այն է որ շարաքով մի կողմ մուշտարի կը ծանրան ծերկից, գետինը, Աստուած վրայ, իմ սրտու արեւ գիտենայ, հօրս գիւրգիւնը վրայ...» արտաքինի երգումներով մի քանի կօպէկի բան ծախում և աշխարհիս երեսին սպրում: Այստեղ կան դերձիկ, կօշկակար, դարբին, հիւն, ներկարար, ոսկերիչ և այլ շատ արհեստաւոր, բայց տրանց մէջ երկու ջալալ-Օղլեյի չը կայ: Ի՞նչու, որովհետեւ ջալալ-Օղլեյին արհեստագիտութիւնը սատիկ ատում և ճարհեստաւոր անուն կրելը իրան նախադիմ է համարում, այս պատճառով բոլոր արհեստաւորները օտարականներ են և վաճառականներից լաւ փող են աշխատում: Մի գոյգ եղ լծած սպալապան Հեպանը քար աւազ կրելով օրական երկու բութի փող է աշխատում, մինչդեռ փքված վաճառականը դալիւ վրա անդրոյծ քնում և երազում լաց է լի նում իր ապագիկ տուած ապրանքների վրա, որոնց փոխարէն երբեմն քարի ու դարման էլ չեն վճարում աղքատ մուշտարիքը: Ուրեմն այս մէկ պակասութիւնն է որ ջալալ-Օղլեյին կուրօրէն պաշտում է վաճառականութիւնը, և ատելով ատում արհեստագիտութիւնը:

Ջալալ-Օղլեյի վերջին ժամանակ ահալին ձայն բարձրացրին մի ամփայ մէջ անքան փող հաւաքեցին, որ ոչ միայն մի, այլ երկու կանոնաւոր դպրոց բացարին, որոնց վրա տարեկան առնուազը ծախս է գնում 3260 բ.: Աւայտմ դպրոցների մասնաւոր արտաքին ձեւերը և փայլը շատ լաւ է, և աւելի լաւ կը լինի եթէ շատ չը յօգնուէին և դպրոցի փողերի հետ մի քիչ տնտեսաբար վարվէին: Օրինակ, ինչ կարեւորութիւն կար 150 բ. տալ և դպրոցի համար մի երկաթեայ արկղ բերն տալ և դատարկ վեր դնել: Միթէ անհարկն էր դպրոցի գումարը առանց երկաթեայ անդուկի պահելը: «Մենք մեր գեղի մէջ հազար հետ չիօլ ենք բաց արել, փողերը ես ու դու կրել ու չիօլ յետ կողպել: Ես չիօլներն էլ շատ չի քաշի, էլի փողերը կուտեն, չիօլ կը քանդեն, կը մնայ դարձակ էրկիթէ դուրիկը...» Այն այսպիսի մտքեր ես շատ անգամ լսել եմ ոչ միայն դրացի գիւղացիներից, այլ նոյն իսկ ջալալ-Օղլեյիներից: Աստուած տա որ շատերի այս կարծիքը սխալ լինի և դպրոցը յարատեւութիւն ունենայ:

Ջալալ-Օղլեյոց մի պակասութիւնն էլ այս է որ իրանց որդկերանց չեն թող տալ որ մի որ և իցէ դպրոցում աւարտեն. երբ որ աշակերտը կարողանում է իր հօր դուռնի մատնում գրել «Վարկոս Միկիտիչը մի տրիցատկայ արաղ տարաւ, Թորոս Միկիտիչը երկու արջին չիթ տարաւ և այլն», հայրը այդ քանով բաւականանում է և որդին դպրոցից հանում և իր նման արդիւնաւոր վաճառական! չիտում: «Վարդապետ ես տէրտէր խոմ ընելու չէ իմ տղէն, ի՞նչ էնքան ընի որ մի դալամ բռնի և դուքին նիդայիլքէկը (ապաւիլներ) գրի, հէրիքա, շատ կարգաւ ընչիս ա հարկաւոր...» Այն այս է ջալալ-Օղլեյոց շատերի կարծիքը: «Մէկը միւսին հետեւելով սիրում են շոյալաբար պծնասիրութիւն և քալ առ քալ հետեւում մօղային: Ջալալ-Օղլեյին իր բոլոր գիտութիւնը, շնորհքը, խելքը... կենտրոնացնում է ուսուցիչութեան մէջ, ու որ գիտեցաւ մի երկու անգամ թիֆլիսաւ, նա պիտուէր ծայր հասած է: Ջալալ-Օղլեյոյ համար հայերէն չը գիտենայ շատ անշուն պակասութիւն է, բայց ուսերէն չը գիտենայ անբացատրելի տարաբախտութիւն: Ինչնահաւանութիւնը այնպէս սուր ճանկերով գրկել է ջալալ-Օղլեյին, որ մէկը իր Ուլմայական գագաթին նայում է միւսի վրա որպէս մի չնչին արարածի: Ամենքն էլ ուղղում են իրենց տեսը բռնի և հրամայող լինել: Ջալալ-Օղլեյոց հիւրասիրութեան վրա մի գաղափար տալու, ընթերցողի ուշադրութիւնը դարձնում եմ հետեւալ անցքերի վրա: Մի հայ վարդապետ, պատմում է ջալալ-Օղլեյին, երբ որ գիւղում ոչ մի տեղ մի գիւղացին պատառաւան չէ ճարում, ճարահատակ եկեղեցումն է գիւղերում: Միթէ գիւղում ընկերներին հետ զբոսնելու ժամանակ տեսնում եմ պատի տակ մի օտարական կուշ եկած, որը, ինչպէս պատմեց, ոչ մի տեղ ընդունելութիւն չը գտնուէր զինի, ստիպված գիւղերը այդ տեղ էր անցկացնում: Մի օտարական, որին աւագանիքը Վարանցովի մօտ մի-

ւաւորել և փողերը յափշտակել էին, մինչև իր գանգաները կարգի գնելը, պատերի տակ ողբալի ձայնով աղբւսում էր և դողողուն ձեռքերով իր վէրքերը կապտում: «Ի՞նչպէս վիրաւորեցին, որքան փող տարան...» աւելորդ հարցերով ձանձրացնում անտէր վիրաւորալին, և թողնում զընտում: «Մի օր էլ հետեւալ վիճարանութեան եմ պատահում: «Այս արդ ջան, ես քու չալիքն եմ քաղել, քեզ համար եմ չարաբովել, դու օր էս միջով ինձ հաց չես տալի, տեղ չես տալի, ուրիշ ո՛վ կը տայ»:—Ա՛յ օտ չաօ. զարմանալով բղաւում էր աղան, ալ տարաւ, ես քեզ փողով մակ եմ բռնել որ իմ պակասը հնձեմ, ինչ պարտական եմ քեզ հաց էլ տալու, պաշօլ տի, ապարանցի կօպիտ, քեզ տասը 10 շը բաւական չի, ես քեզ վրնց կշտացնեմ...»

Արդարեւ ջալալ-Օղլեյի վերջին ժամանակ երեք ամենանշանաւոր գործեր կատարեցին. ձորի այն զարհուրելի ճանապարհը հարթելը, խորտակված եկեղեցին հիւնայի ձեւով վերակառնեցնել և երկսեռ դպրոցներ բաց անել, մի գիւղի համար շատ մեծ բան է: Բայց ջալալ-Օղլեյի էլ ինչն ունեն հողաւոր մի ամենակարեւոր գործ եւս, որի մասին չը գիտեմ ինչի ոչ որ չէ մասնում: Այդ կարեւորութիւնն է գիւղի վերջին ծայրում գտնված աղբիւրը, որով համարեա ամբողջ գիւղը եօղալ է գնում: Բայց թէ ինչ արարափելի խայտաւարութիւններ են պատահում այդ աղբիւրի գլխին, Աստուած ազատէ. ամեն օր իրար դուրս կտորել, իրար քնիթ ու պռնիկ ջարդել, չիւր ամաններ իրար գլխով տալ, անյիշելի յիշոցներ անել... սովորական բաներ են դառել և բնական է որ այդպէս էլ կը լինի քանի որ մի աղբիւր, ջուր տանող է հարկւր: Ո՛վ որ ուժեղ է, մի ժամում մի քանի անգամ լեցնում տանում է, իսկ տկարը ջրի ամանը ձեռքը ժամելով կանգնած հերթի է ապաստում: Այս անկերելի խայտաւարութեանց առաջն առնելու համար հարկաւոր է մի աղբիւր էլ գիւղի կենտրոնում վաղեցին, որի համար գլխաւոր յարմարութիւնները բնութիւնը ինքը պատրաստել է և շատ մեծ ծախս չի նստի: Ամենից լաւ տպաւորութիւն թողեց ինձ վրա այս գիւղի տանուէր պ. Սէրէկ Նիմիշը (կարծեմ այսպէս էր անունը), որ իմանում էր ազատ գրել կարգաւ և ճարպիկ խօսել հայերէն, ռուսերէն, գիտէր շատ լաւ վրացերէն և թուրքերէն, լաւ աղբիւրութիւն ունէր ժողովրդի վրա, ամենայն ճշգրտութեամբ կատարում էր իր պաշտօնը: Երբ որ ամեն գիւղ այսպիսի պարզացած թեօխայ կուռեհնայ, այն ժամանակ ամեն բան կարգ ու կանոնի տակ կը մտնի:—

Ճանապարհորդ

ՆԱՄԱԿ ԱՆՈՒԼ-ՔԱԼԱԿԻՅ

12 սեպտեմբերի

Տեղիս քաղաքային-հասարակական բանկի գործը զրկեցաւ հաստատ հիւրի վրա:

Պ. Նահանգապետի ուղարկած աստիճանաւորը տարաւ իր հետ հասարակական վճիռը ֆինանսային նախարարութեան ներկայացնելու և թողաւութիւն ստանալու համար:

Այդպիսի հիմնարկութեան բացակայութիւնը շատ զգալի էր և ինքրիկ մի քանի մեր աղաներին դա չէր կարող հաճել լինել, որովհետեւ նրանք սովորել էին մարդու կրիտիկական ժամանակից օգուտ քաղել, վերցնելով բարբարոսական տոկոսներ և ահա դրանք կը գրկվին այդ աղբիւրից:

Բանկի դրամագրու կազմելու են քաղաքային արկղի 20,000 բութը, բացի դրանից, ինչպէս լրտւում ենը, բանկին կը տրուէ գաւառիկ շնաւական շտեմարաններից անցեալ տարում ծախված հացիցից գոյացած գումարները:

Յօգուտ բանկի հիմնարկութեան ամենահեռանդոտ աշխատող եղաւ Թիֆլիսի Նահանգապետ իշխան Գագարին, որին մատուցանում ենք մեր ի սրտէ շնորհակալութիւնը:

Այսօր տեղա հասան մեր նոր ուսուցիչներից երկուսը և պ. Ալլահվերդեանց տեսուչը:

Պարոնը մի ժամանակ տեսչութիւն է արել Ախալցխայի հողեր ուսուցիչութեան, այստեղ գտնվող մի քանի պարոններ գտնվում են նրա գործունէութիւնը:

Առ այժմ մենք եւս այդ քանով ենք բաւականաւոր, ցանկանում ենք որ շուտով մեզ կարելի լինի աւելի հաստատապէս խօսել:

Մի ուսումնարանի յառաջընթացութեան և փոխադարձաբար յետադիմութեան պատճառը տեսուչն է, այդ պատճառով էր անցեալ տարի ուսումնարանների դրութիւնը անմիջապէս, որ տեսչութիւնը մի այնպիսի անձի ձեռք էր, որ փոխա-

հակ իր գործով պարագլու մի լրագրի թերթերն էր միտում, համարեա միշտ հար- բած էր լինում և ուսումնարանի դրութեան մասին նրան մեղադրողները վրա կատարաբար յարձակուիւմ էր: Ուսումնարանը այդ միջոցին մը- նում էր մի խեղդատակ-ուսուցչի (Աստուած ու- սուցիչ համարէ) հակոտնաթեան տակ:

Բայց այժմ ինչ և իցէ մեր ուսումնարանը աղա- վեցաւ հարեցողներէր, աղաւթեցաւ այնպիսի բժաւմով, էականորէր, որոնք ոչ միայն կրթել այլ և խանդարել միայն կարող էին մանուկները մտաւոր ընդունակութիւնները:

* *

ՆՆՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԷՄԻՐ—ԽԱՆ—ՇՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են, որ այնտեղ օգոստոսից սկսած սաստիկ տարածված են ծաղիկ և կարմուռի հիւանդութիւնները, որոնք մանուկները բազմաթիւ զոհեր են տանում:

Այս օրերս մեր խմբագրատանն այցելեց մի Ե- րիտասարդ անգլիացի, պ. Մ. Ա. Մ. օրիւն օն (M. A. Morrison), որ Բելիսկան ընկերութեան անդամ է: Պարոնը ընծայեց մեզ մի օրինակ հայոց այրենարանի և Ս. Յովհաննէս ակադարանի եր- րորդ գլուխը կ'ս'ր'ի համար: Այդ գլուխը ան- գլխական Բրայտըն քաղաքի մէջ է տպւած, ուր դառնում է մի դպրոց ամեն աղքատներն կոյրերի համար: Գրեթէ ամեն լեղուներով տպւած են գրքեր կոյրերի համար վերեալ քաղաքում: Հայոց այրենարանը կոյրերի համար հնարեց պ. դոկտօր Մուն (Dr. Moon): Այդ գլուխը վաճառուի է Բելիսկան ընկերութեան Թիֆլիսի գրաւորանա- նոցի մէջ: Յայտնի է, որ կոյրերի համար տաքերը դ ու ռ ու ը ն կ ա ծ են լինում, որպէս զի կոյր մանուկները մասնաւոր չօգտվելով կարող կարո- ղանային Բայց դոկտօր Մունի հայոց այրենա- րանը, թէ և դուրս ընկած տառերից է լողկացած, նոյն իսկ տառերը չունեն հայոց տառերի ձև, այլ միայն յարմարեցրած են հայոց տառերին: Երևում է որ պ. Մունի սխառմը բոլորովին տարբերվում է այդ կողմից գերմանական սխառմայից: Յայտ- նի է, օրինակ, որ Վիլհելմայն կայ մի նշանաւոր դպրոց կոյրերի համար, որտեղ սովորեցնում են կոյրերին, թէ և դուրս ընկած, բայց հասարակ ձևի տառերով, որոնք ոչինչ փոփոխութեան չեն են- թարկվել ձևի կողմից, այլ պահպանել են իրանց սկզբնական իսկական ձևը: Ուշադրութիւն ենք դարձնում այն բանի վրա, որ կոյրերի համար թիւերաց լեզուով հրատարակված սուրբ գրքերը պ. Մուն նոյնպէս տպում է հայերէն տառերով: Գոյաօր Մուն տպել է իր սխառմայով բազմաթիւ գրքեր ամեն աղքատներն կոյրերի համար, որոնցից ամենապատը անգլիերէն լեզուով, յետոյ դանիերէն, իռլանդերէն, իտալերէն, ֆրանսիերէն, ռուսերէն, սպանիերէն, գերմաներէն, արաբերէն, հայերէն թիւերէն (հայոց տառերով), չիլիերէն, յունարէն, նոլիերէն, տահիտեան և ուրիշ մի քանի լեզու- ներով:

Գոկտօր Գրիգոր Արծրունու դասախօսութիւ- նը, որ նորերում թարգմանեց գերմաներէն լեզ- ւով պ. Ա. Ամիրխանեան և հրատարակեց Ս. Պե- տերբուրգում, ծախվում է այժմ Վաշախի խմբա- գրատան մէջ և Զաքարիա Գրիգորեանցի գրաւա- ճառանոցում: Բրոշուրի գինը 25 կոպէկ է:

«Голосъ» լրագրում կարդում ենք, որ այս տարի Ս. Պետերբուրգի Նիկոլայեւսկի զինուորական հի- ւանդանոցի մօտ հիմնված կանանց կուրսերին ներ- կայացան 112 կին ուսանել ցանկացողներ: Հարցաքննութիւն տալու համար այդ խնդրատու կանանցից 66 պատկանում են ուսուցող դա- ւանութեան, 40 հիւանդան, 3 բողոքական, 2 կաթոլիկ և 1 հայ-լուսաւորչական: Ընդու- նելութեան հարցաքննութեան առարկաներն էին՝ ուսուցող լեզու, թվաբանութիւն, գէոմէտրիա, տրիգոնոմէտրիա, ալգեբրա, ֆիզիկա, լատիներէն լեզու և նոր լեզուները մէկը՝ գերմաներէն կամ ֆրանսիերէն: Կատարելագոյն հասանութիւն ստա- ցան միայն 77 անձինք, որոնցից 49 ուսուցող են, 26 հիւանդ, 1 բողոքական և 1 կաթոլիկ: Համե- մատելով միւս տարիների հետ, այս տարվայ ներ- կայացրած խնդիրները թիւը շատ փոքր էր, պատ- ճառ որ այժմ առարկաներին աւելացաւ լատինե- րէն լեզուն և բացի սորանից ընտանեկան ուսում ստացած կանայք չեն ընդունվում:

«Русский Курьеръ» լրագիրը հաղորդում է որ օրիորդ Լիւդմիլա Պակուսկայա այս տարի մի խն- դիլը է ներկայացրել Մոսկվայի համալսարանը՝ որպէս զի նրան ընդունեն ֆիզիկո-մաթեմատիկա- կան բաժնի ուսանողների թուում: Պրոֆէսօր Դա- վիդովի համալսարանական խորհրդում յայտնած կարծիքից երևում է, որ օրիորդի ընդունումը դի- տութիւնը զինադական պրոգրամայից էլ բարձր է: Իսկ մաթեմատիկայում օրիորդը ցոյց է տալիս առանձին ընդունակութիւններ: Բայց համալսարա- նական խորհուրդը իրաւունք չունիւով ինքն զմեզ օրիորդի ընդունութեան հարցը, յանձնել է օրի- օրդի խնդիրը ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեանը:

ԹԻՖԼԻՍԻՑ և գաւառական քաղաքներից ստա- նում ենք բազմաթիւ նամակներ, որոնք գանգատ- ներով լի են մեր հոգևորականների դէմ:

Մեր մշտական թղթակից պ. Ա. Նր. գրում է մեզ ՆԻՔԻԱՆՑԻՑ. «Այստեղ «Մշակի» համարները շատ կանօնաւոր կերպով են ստացվում: «Մշակ» այստեղ 70-ից աւելի բաժանորդներ ունի, որոնք բոլորն էլ բաւական են: Ես ինքս մի քանի ան- դամ փորձեցի և զանազան միջոցներ գործ դրի, որ ուրիշի համարները ստանամ, բայց այդ ինչ չը յաջողեց: Այդպիսի կանօնաւորութիւն փոռ- տան մէջ մտել է պ. Գեկարխանեանի ջնարհը»:

Հինգշաբթի, սեպտեմբերի 20-ին հայ գերասա- նական մշտական խումբը ԹԻՖԼԻՍԻ Ամառային թատրոնում ներկայացրեց «Պէպո», իսկ սեպտեմբերի 24-ին «Լուսի Գլուխ», դրամա երեք արարածով, թարգ. Ֆրանսիերէնից և «Վոյքի իմ վեպը» վոդը- վիլ, հեղ. Զանգ. Մ. Տէր-Գրիգորեանի: Շարաթ սեպտեմբերի 29-ին նոյն խումբը յօգուտ պ. Գ. Չմէկեանի կը ներկայացնէ «Արարիւն» Իշխելէ: Տեղերը գինը սովորական է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԱՍԻՍԻ» ԹՂՈՒՍՈՒՄԻՆ

Բարենորոգման յանձնաժողովն օգոստ. 6-ին, երկուշաբթի գումարեցաւ: Թուրք անդամները տրամադրեց շարակաւորած են թէ քանի որ Երմէնիստան կը կոչուի այս երկրին, որ 4— 500 տարիէ 'ի վեր մեր արեւմտը շարա- խուած է, և թէ հայք մեկուսանալով մենք զատուի կը յանդգնին, ինչ հարկ կայ մեզ սոյն հողին վրա յանուն այս երկրին այլ ևս խորհելու ու խօսելու...: Նուսուֆ փաշա զիտելով որ Թրքաց ներքին ներկը հետզհետէ յերևան ել- նելու վրա է, և տեսնելով որ սղա այն Թուր- քերն են, որք Խտարէի և Պէլէտիէի ժողովոց անդամաց ամառական տրուիլը և աշարն ու ա- ղը 'ի ձեռն Միւլթէղլիմեքու հաւաքուիլն ա- ռաջարկած էին և զայն հակառակ իւր հա- մոզել փաստերուն դեռ կը պնդէին, անուշ տեղը կապելով մը յանձնաժողովոց շարունա- կութեան այսուհետեւ պէտք մը չը լինիլը կը յայտնէ: Ահա այսպէս բարենորոգման յան- ձնաժողովն ինքնին կը լուծուի ապարդիւն կեր- պով: Թուրքերն զհայս մեղադրելով մեր չը մաս- նակցութեանը համար, իսկ հայերն զԹուր- քերն իրենց տգիտութեանը համար:

Թրքաց կայսերական Գովաքներուն մատու- ցած ծրագրին պատճէն 'ի ձեռն Գեր. Տ. Վա- հան փարգապետի 'ի Պատրիարքարան յղեցաւ: Երբ Թրքացը մերինն հետ բաղադրամբ չը- րատարակուի, այն ատեն աշխարհ պիտի տես- նէ Հայաստանից Հայոց յառաջադիւնութիւնն և Թրքաց յետադիւնութիւնը, մանաւանդ Թրք- աց կողմնապահութիւնը պիտի յայտնվի, երբ աղիամի հասցիլը և ոչխարաց և այժի բուր- դի և քէլէկի, քէթթէի և մթղիի և այլն ա- պրանքը Բրդաց կը սեփականեն, իբր երկրը շէնցնող և հարստացնող՝ ազգի, առանց 'ի միտ բերելու թէ հայք ևս այդ մասին Բրդ- աց չափ բաժին ունին: Հակառակ նոյն իսկ Բրդաց 'ի զործ դրած վատ և բուռն յափշ- տակիչ Հրքատահարութեան 'ի մասին ոչնա- րատածութեան հայոց, և Բրդաց կողմէն սաս-

տիկ արգելման և յափշտակութեան 'ի մասին Հայոց հաւաքման և վաճառման այդպիսի լու- նային բերոց և ապրանաց տեղական իշխա- նութեանն միշտ քաջաբերուելով:

Նրէկ լուեցաւ թէ Գովաքը առանց 'ի Կարին բան մի ըրած լինելու և մինչև իսկ Բրդացը հողային դատերն առանց ձերբա- կալուած Գուրդ պէյերը պատժելու 'ի Վան պիտի փութան: Ահա Գովաքը Բրդացի Հա- յերն ու Քիւրտ պէյերը տեղւոյս դատարա- նաց, ուր 30 տարիէ 'ի վեր Հայք չարաչար տառապած են և Քիւրդ պէյերն միշտ պաշտ- պանութիւն զանելով Հայոց արիւնը ծծած ու քամած են...: Եթէ այս այսպէս պիտի լի- նէր, ինչու ուրեմն ազգասէրք ոմանք զգու- շացուցին Հայերը դատ չը բանալու համար պէյերու դէմ: Աւաղ, կարծես թէ բարձր Հայքը քանդուլ քաղաքականութիւն մը կը գործէ այժմ...: Մինչ Տիգրանակերտի Գովաքը համարձակ կը գործեն թերեւ այն կողմի Հա- յերուն քիչուորութեանը համար, կամ թէ այն կողմը աւելի Բիւրտտան և Ասորեստան լինելուն համար:

Նոյնպէս լուեցաւ թէ 'ի Կերճան 18 Հայք բանտարկուներ են իբրեւ գործակիծք Թուրք աղջիկ մ'առեանալով Հայոս մի փա- խտեան: Առաջնորդէն և Անգլիական հիւ- պատուէն առ Վալին եղած դիտողութեանց վրա երեքէն դատ միւսները արձակուած են այժմ: Մինչ Բիւրտտեր և Թուրքեր համարձակ կառեանգին կամ լիկն հարկաւոր Հայ կիներ- րն ու աղջիկներ և անպատիւ կը մնան, ընդհակառակ կը պատժուին մինչև անգամ այն Հայք, որք Թրքուհի մ'առեանալով Հա- յու մը 'ի պաշտպանութիւն վարուած լինե- լու կարծիքական ամբաստանութեան մը տակ կը ձգուին նոյն իսկ Թրքերու կողմէն:

Ոչ նուազ հետաքրքրական է սոյն դէպքը որ տեղի ունեցաւ աստ, Սպերի զայմագամ 'ի սէտ պէյ Հայերէն ամբաստանութեան 'ի Կա- րին 'ի դատ կոչուեցաւ, ուր տեսնելով որ պիտի պարտաւորի և միանգամայն հաստա- տուելու վրա է ոչ թէ միայն իւր Հայոց վրա ըրած խժդփական հարստահարութիւններն, այլ և իւր արքունի գանձէն ըրած գողու- թիւնը, 300 ոսկի կը խոստանայ հարցա- քննիչ Էֆէնտիին որ զինք արգարացնէ, որմէն և կը հաղորդուի Նուսուֆ փաշայի, որոյ սուած գաղտնի հրահանգին համաձայն որո- շեալ պահուեն երբ հարցաքննիչ Էֆէնտիի սե- նիկին մէջ, 'ի ներկայութեան նոյն իսկ Էսէտ պէյի իւր եղբայրն ոսկիները կը համբէ, դարակին (Եւքլիւք) մէջէն երկու անձ ելնե- լով՝ շէն կենաք, ալ բաւական է՝ ըսելով կը ձերբակալեն և կը բերեն առ Նուսուֆ փա- շա, որմէն ոսկիներով հանդերձ կը դրկուին առ Վալին, որ և անմիջապէս կը բանտարկէ:

Բայց զարմանալին այս չէ. Կարնեցի... Թուրք պաշտօնայինը՝ որք 'ի սկզբան սաստիկ պաշտպան էին այս անձին, որք և հակառակ տեղութեան այն օրինաց՝ որ կարգիլ տեղացի անձերու Գայմագամ և Միւտիլ լինել, զսա, Սպերցի լինելով հանդերձ, Սպերու Գայմա- գամ ըրած էին, նկատելով որ իրենց պաշտ- պանեալը խայտառակիցաւ, այժմ պաշտպա- նել կը ձգնին առարկելով թէ որովհետեւ ու- կիները համարող եղբայրն է եղած և ոչ թէ Էսէտ պէյ, ուստի պէտք չէ որ մի և նոյն պատիժը կրեն երկուքին:

Անգլիոյ հիւպատոսը միշտ կը տեսնուի Տ. Վահան փարգապետի հետ, կերելի թէ սղա Հայաստանի ծառայութիւն մ'ընելու կը փա- փաքին: Կը կարծուի թէ հիւպատոսն իւր կառավարութեան և վարդապետը Պատրիար- քարանի գրած են թէ առանց եւրոպական խառն լիազօր յանձնաժողովոց մը կարելի չէ յանուն վերականգնութեան այս երկրին՝ ու և ձեռնարկութիւն: Եղիլ թէ 'ի զործ դրուէր այդ առաջարկութիւնն, և ազատէր Հայաս- տան իւր արդի տխուր վիճակէն:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Моск. Вѣд.» լրագրին հաղորդում են մէկ փոքր պատմութիւն, որը բռնել է մէկ գող: Օրօսկի ցիւրիլ Իր բոլոր կրօնների խմբով, ձիաներով, փղերով և այլ և այլով հասա Պէշտ: Փղերից մէ- կը, որ շատ լաւ էր կրթված, Ուղարկայի մայրա- քաղաքը հանելուս պէս, հետեալ քաջագործու- թիւնը ցոյց տուեց: Մի գիշեր, մէկ մեծ ներկայա- ցում կայացաւ, ուր մեծ բազմութիւն էր հաւաք- վել: այդ ներկայացումից վերջ, Բոխա (այսպէս էր փղի անունը) և նրա տէրը քնեցին իրանց ընդհա- նուր ննջարանի մէջ: Գիշերը յանկարծ տէրը զար- թեցաւ մէկ անտոլոր աղաղակից, որը կասկած զգեց նրա սրտի մէջ, որովհետեւ իրանից շատ հեռու չէր դրած փղի սնուցիչը որի մէջ երկուսից մինչև երեք հազար գուլէն փող կար: Նա մտածեց Բոխայի օգնութեանը դիմել: արձա- կեց նրա կապանքներն և ճիշդ որ մի քանի րօ- պէից յետոյ յուսահատական ձիգ ու աղաղակներ լսվեցան: Տէրը մոտ վառեց և տեսաւ, որ փղը իր կնճիթի մէջ բռնել էր մէկ մարդ, որը ամե- նայն ուժով աշխատում էր աղաղակել: Գերին փոր- ձեց վերադառնալ նրա կնճիթը, բայց փղը նրան պատժելու համար այնպիսի ճարպիկութեամբ պա- տին խփեց նրան, որ նա բոլորովին հանդարտվե- ցաւ: Խեղացի կենդանին նայում էր իր տիրոջը, կարծես հրաման էր ինչորում նրանից, և հպատակ- վելով նրան, շարունակեց բռնել գողին, մինչև պոլիսիան եկաւ, որին և յանձնվեցաւ գողը:

* *

«Մասիս» լրագրում կարդում ենք հետեւեալը: «Արագիւրք ոմանք լուր կը տան թէ Զէյթունցի հայք չը կրնալով զինուորական տուրք վճարել, փոխարէն զինուոր տալ առաջարկին են Հալէպի կայսերական քովնէրներուն: անոնք ալ Բ. Գրան ծանուցանելով, նախարարաց խորհուրդն հաւանու- թիւն տուեր, և պէտք եղած իրաւունք երբ է. հետեալ Զէյթունի հայք ներկայ տարիէն ըսկ- սեալ զինուորական ծառայութեան պիտի մասնակ- ցին: Սպարապետի դուռն հրաման զրկեր է Գա- մապիտի դորաբանակին հրամանատարութեան, որ Զէյթունի մէջ վիճակով զինուորագրութիւն ընեն և այլ նախապատրաստական գործողու- թիւնները կատարեն: Զէյթունէն առնուելիք զինուորները կայսերական հինգերորդ բանակին մէջ պիտի ծառայեն, որոյ կեդրոնն է Դամաս- կոս»:

* *

Նոյն լրագրի մէջ կարդում ենք և հետեւեալը: «Մարաշէն գրուած նամակ մը լուր կը տայ թէ Անտիոքաց հայ բնակիչներն Գէօնէան Սար- գիս Էֆէնդի անուն պատուաւոր հայ վաճա- րական մը Զէյթունի փոխ-գայմագամ անուա- ներ է ըստ առաջարկութեան Հալէպի երեսփո- խանական ժողովոյն»:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 սեպտեմբերի: «Петерб. Вѣдом.» լրագրը հաղորդում է, որ պոլի- ցիան Սէրգիէյովայ փողոցի վրա գտնվող անե- րից մէկի մէջ մի գաղտնի տպարան գտաւ: Կայանաւորված մարդիկը մի արգելված բու- վանդակութեամբ բրօշուր էին շարուն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 սեպտեմբերի: Պետա- կան բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ռ. 62½ կ., երկրորդ 93 ռ. 87 կ., երրորդ 93 ռ. 75½ կ., չորրորդ 93 ռ. 75½ կ., ներքին 50% առաջին փոխառու- թեան տոմսակն արժէ 230 ռ., երկրորդ 232 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառու- թեան տոմսակն արժէ 92 ռ., երկրորդ 92 ռ., ոսկի 7 ռ. 73 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,37 պէնտ: Ցրամադրութիւնն աւելի լաւ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԴՐՈՒՆԻ

